



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՁԵԼԸՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒՑԻՉՆԵՐԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 31 Մարտի կեսօրին ընդունեց այցելութիւնը Լոս Անձելըսի ժամանակից Արուեստի Թանգարանի (Museum of Contemporary Arts-MOCA) Ներկայացուցիչները՝ գլխաւոր Վարիչ Տիար Փոլ Շիմել եւ բարզաւաճման տնօրին Օր. Ճենիֆըր Արսենո, որոնք յատուկ ժամադրութեամբ Ազգ. Առաջնորդարան եկած էին Ներկայացնելու Թանգարանին մօտալուտ մեկ ցուցահանդեսին ծրագիրը:

Արդարեւ, Թանգարանը ծրագրած է յառաջիկայ Յունիսին սկսեալ իր յարկին տակ հիւրընկալել աշխարհահոչակ ու բազմատաղանդ հայագի արուեստագետ Արշիլ Կորքի (Ոստանիկ Աղոյեան, 1902-1948) գործերը: Յուցահանդեսին բացումը տեղի պիտի ունենայ 6 Յունիսին ու պիտի տեւ մինչեւ 20 Սեպտեմբեր: Յարգելի հիւրերը բացատրեցին, թէ այս ցուցահանդեսը կ'հրականացնեն Ֆիլատելֆոյ Արուեստից եւ Լուսոնի թանգարաններուն հետ գործակցաբար: Յուցադրութեան պիտի դրուին Կորքին շուրջ 200 արուեստի գործ՝ գեղանկարներ, քանդակ, տպածոյ եւ թուղթի վրայ աշխատանքներ:

Ուշագրաւ է, որ Կորքի գործերուն ցուցադրութիւնը կը զուգադիպի Յեղասպանութեան 95րդ տարեդարձին: Ծանօթ է, որ Կորքի Յեղասպանութեան վերապրած է ու անցեալ դարու 20ական տարիներուն գաղթած է Միացեալ Նահանգներ. անոր ստեղծագործական կեանքը կ'երկարի մօտաւորապէս 30 տարիներու վրայ, մինչեւ իր եղերական մահը: Յուցահանդեսը պիտի մեկտեղէ անոր կեանքին ու արուեստին «պատմութիւնը» մարմնաւորող գործեր:

Թանգարանին Ներկայացուցիչները յայտնեցին, թէ կազմուած է «Արշիլ Կորքի Բարեկամներ» անունվ խմբակցութիւն մը, բաղկացած՝ հայ թէ ամերիկացի արուեստասերներէ, որոնք աշխատանք կը տանիս ցուցահանդեսին մասին տեղեկատուական աշխատանք ծաւալելու հայկական եւ ամերիկեան շրջանակներու մէջ, տրուած ըլլալով, որ Կորքի կը հանդիսանայ ամերիկեան գեղանկարչութեան տիտաններէն, որ իր կնիքը դրած է 20րդ դարու առաջին կիսու նկարչական արուեստին ու հոլովոյթին վրայ, իսկ գործերուն մէջ կ'արտացոլան իր ապրած ողբերգական

կացութիւնները, ի շարս որոնց՝ Ցեղասպանութեան պատանիի աչքերով ականատես ըլլալու հանգամանքը: Անոնք խնդեցին Առաջնորդ Սրբազնեն, որ Ազգ. Առաջնորդարանը մասնակից ըլլայ ցուցահանդեսին մասին տեղեկութեանց տարածման՝ հայ համայնքի զաւակներուն մօտ, քաջալեր հանդիսանալով, որ մեր ժողովորդը այցելէ թանգարանը եւ հաղորդակից դառնայ մեծ արուեստագետի հոգեկան աշխարհին ու ժառանգութեան:

Նշենք, որ հանդիպումին ներկայ եղաւ Տիար Յրայր Կարպուշեան, որ անդամ է Թանգարանին պատասխանատուններուն հետ գործակցող խմբակին:

Առաջնորդ Սրբազնը ողջունեց այս ցուցահանդեսի նախաձեռնութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնեց ընդառաջելու հիւր պատասխանատուններուն փակաքին: Ան այս առիթով նաեւ յուշանուերներ յանձնեց Թանգարանի պատասխանատուններուն:

ԼԱՇՎԹԸ կը գտնուի Լու Անձելըսի քաղաքամէջ գոտիին մէջ, հասցէն է 250 South Grand Ave., Los Angeles, CA 90012

## **PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE MUSEUM OF CONTEMPORARY ART**

On Wednesday, March 31<sup>st</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chief Curator of the Museum of Contemporary Art (MOCA) Mr. Paul Schimmel, and Director of Development Ms. Jennifer Arceneaux.

The guests informed the Prelate that they are organizing an exhibit to be featured at MOCA titled Arshile Gorky: A Retrospective, which will run from June 6<sup>th</sup> to September 20<sup>th</sup>. The exhibit was previously on view at the Philadelphia Museum of Art and the London Tate Museum, and features nearly 200 of the artist's works including paintings, sculptures, prints, and drawings.

The guests also reported that the " MOCA Friends of Arshile Gorky" committee, comprised of both Armenian and non-Armenian members, has undertaken the advertising for the upcoming exhibit among both communities, and asked for the Prelacy's assistance in publicizing the exhibit among the Armenian community. A member of the aforementioned committee, Mr. Hrair Garboushian, also participated in the meeting.

The Prelate welcomed the initiative of the representatives in the planning of this exhibit and expressed his support of the endeavor. The Prelate also presented the guests with mementos.

MOCA is located at 250 S. Grand Ave. in Los Angeles.